

Կարծիք  
պաշտոնական ընդդիմախոսի

Տիգրան Վալերիի Բեզլարյանի «Բնակարանային ֆոնդի ընդլայնման և արդիականացման ֆինանսական մեխանիզմների զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսի աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում բնակարանային ֆոնդի ընդլայնման և արդիականացման ոլորտում գործուն ներդրումային հարթակների և մեխանիզմների ձևավորմանը, որոնք կարող են էականորեն բարձրացնել ոլորտի մրցունակությունը:

Շնորհիվ բնակարանային շինարարության և դրա հարակից ծառայությունների պահանջարկի շուրջ առկա եական ներուժի, շինարարության այս ձյուն ի վիճակի է ստանձնել ՀՀ տնտեսական աճի զարգացման շարժիչներից մեկի գործառույթները և նվազեցնել տնտեսության խոցելիության աստիճանը հնարավոր ցնցումների դեպքում: Վերոնշյալի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ներդնել և զարգացնել ֆինանսավորման և ներդրումների իրականացման արդյունավետ և գործուն հարթակներ:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում անկախության պահից ի վեր բացակայում է բնակարանային շինարարության ոլորտում օրենսդրություն կարգավորված ներդրումային մեխանիզմ կամ հարթակ:

Հետազոտության օբյեկտն է՝ ՀՀ-ում բնակարանաշինության և բնակքոնդի վերակառուցման ֆինանսավորման ինստիտուցիոնալ, կազմակերպչական և իրավական հիմունքներն ու դրանց ձևաչափերը:

Հետազոտության առարկան է՝ ՀՀ-ում բնակարանաշինության և բնակչութիւնի վերակառուցման ինդուստրիայի պետական կարգավորման և ներդրումների խթանման և ֆինանսավորման համակարգի կատարելագործումը՝ ուղղված ոլորտի ամբողջական ներդրումային կայուն մատրիցի և դրա հարթակների ձևավորմանը:

Հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության մոտեցումների և առաջարկների շրջանակում որպես գիտական նորույթ են ներկայացվել հետևյալ դրույթները՝

✓ Մշակվել է քաղաքային բնակչութիւն նորացման, բնակարանաշինության և առկա բնակարանային ֆոնդի վերակառուցման ծրագրերում ներդրումների ներգրավման բազմախողովակ մատրիցը՝ ներդրումների և ֆինանսավորման ինը խողովակներից հավասարակշիռ ներգրավմամբ, համաձայն հետևյալ շափանիշների.  
ա) պետական բյուջեի վրա բեռի նվազեցումը, բ) ծրագրերի ոիսկայնության աստիճանի նվազումը, գ) ներդրումների եկամտաբերության բարձրացումը, դ) ներդրումային գործընթացում բիզնես որոշումներ կայացման վրա պետության անմիջական մասնակցության նվազումը և կարգավորող ու վերահսկիչ գործառույթների գործունակության բարձրացումը, ե) ներդրումների տիպերի և առանձնահատկությունների հաշվի առնումը, ենելով բնակարանների առանձին շահառուների պահանջներից:

✓ Մշակվել է հիփոթեքային վարկերի արժեթղթավորման մատրիցի հայեցակարգ՝ նպատակ ունենալով ստացված ներդրումային միջոցները ուղղել ՀՀ բնակարանաշինության և բնակարանային ֆոնդի վերակառուցմանը:

✓ Մշակվել է ՀՀ-ում բնակարանային շինարարության ոլորտում ներդրումների համար բնակարանաշինության խնայողությունների և հիփոթեքային վարկավորման պլատֆորմը՝ հաշվի առնելով պետության, շահառու ներդրողների, կառուցապատողների և ֆինանսական շուկայի մասնակիցների շահերը:

✓ Մշակվել է պետական սոցիալական բնակարանային ֆոնդի և սոցիալական հիփոթեքի ձևավորման համալիր մոտեցում՝ հիմնված հատուկ սերտիֆիկատների

մեխանիզմի կիրառման, իրականացվող գործարքների թվայնացման, սոցիալական բնակարանների մասնակի սուբյետավորման և գրավիչ տոկոսադրույքների վրա:

*Ատենախոսության առաջին զիսում* ներկայացված են զարգացած և զարգացող երկրներում բնակարանային շինարարության ոլորտի զարգացման և ներդրումայինգործացների ներկայիս միտումները, ներկայացված են մի շարք հեղինակավոր խորհրդատվական և միջազգային ընկերությունների կողմից իրականացվածկանխատեսումներ և վերլուծություններ ոլորտի հետագա զարգացման վերաբերյալ:

*Ատենախոսության երկրորդ զիսում* իրականացված է բնակարանների ձեռքբերման ու կառուցման և բնակարանային ֆոնդի վերակառուցման համար պանացվող ներդրումների գործնական մեխանիզմների համեմատական վերլուծություն Հայաստանում և այլ երկրներում: Ատենախոսի կողմից մանրամասն ներկայացվել են ԵԱՏՄ երկրներում բնակարանաշինության ոլորտումիրականացված ներդրումների համեմատական վերլուծությունը և ոլորտի զարգացման ներկայիս միտումները: Ոլորտիմի շարք կարևոր ցուցանիշներով Հայաստանը զգալի զիջում է թե ԵԱՏՄ անդամ հանդիսացող երկրներին, թե միության անդամ երկրների միջինացված ցուցանիշներին: Ատենախոսի կողմից նաև ներկայացվել են Գերմանիայիում բնակարային շինարարության և բնակարանային ֆոնդի վերակառուցման ոլորտում ներդրումների իրականացման ավանդականբնակարանաշինական խնայողությունների համակազը, Մեծ Բրիտանիայում բնակարանների ձեռքբերման «shared ownership» համակարգը:

*Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ-ում բնակարանաշինության և բնակարանային ֆոնդի վերակառուցման ներդրումային հարթակի կառուցման հայեցակարգը, մոտեցումները և կառուցակարգերը» զիսում առաջարկվում է ներդնել բնակարանաշինության և առկա բնակարանային ֆոնդի վերակառուցման ծրագրերի իրականացման բազմախողովակ ներդրումային մատրից՝ 9 խողովակներից ներդրումների և*

ֆինանսավորման հավասարակշիռ ներգրավմամբ՝ ուղղված իրականացվելիք ծրագրերի ռիսկայնության աստիճանի նվազեցմանը և եկամտաբերության բարձրացմանը:

Ներդրումների և ֆինանսավորման ներգրավման յուրաքանչյուր առաջարկված հարթակի համար սահմանվել են իրականացման քայլերը և չափորոշիչները, առաջարկվել են ծրագրերի իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի՝ բազմաբնույթ տեսակի չարաշահումների կանխարգելման չափորոշիչներն ու կառուցակարգերը: Ներդրումների և ֆինանսավորման յուրաքանչյուր հարթակում հաշվի են առնված և ներկայացված են առանձին ծրագրերի բոլոր հիմնական շահառուների, մասնավորապես՝ պետության, ներդրողների, ֆինանսական շուկայի և շինարարական ընկերություններիօգուտները և հետաքրքրությունները:

#### Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ:

Ածխատանքում տեղ են գտել հետևյալ դիտողությունները.

1. Աշխատանքի աղյուսակներ 1-ից մինչև 10-ում տվյալների ամփոփումը ավարտվում է 2017թ.-ով: Ընդ որում այդ տվյալների մի մասը վերաբերում է տարբեր երկրների սոցիալ-տնտեսական ցուցանիշներին՝ օրինակ ՀՆԱ, աշխատավարձի միջին մակարդակ և այլն, որոնք հասանելի են ինչպես տվյալ երկրների համապատասխան կառույցների պաշտոնական կայքերում, այնպես էլ տարբեր միջազգային կառույցների գեկույցներում:
2. Շինարարության ոլորտի զարգացումը ունի իր առանձնահատկությունները տարբեր երկրներում: Մի շարք երկրներին, այդ թվում Հայաստանին, ընտթագրական է տվյալ ոլորտում զրանցված և իրական զրաղվածների թվի բացահայտման արդի խնդիրներ: Նաև դա է պատճառ, որ զրաղվածության կառուցվածքում շինարարությունը բավականին փոքր ծավալներով է ներկայացված: Հեղինակը, ըստ էության, կարևորելով շինարարության աճի

դերը տնտեսության զարգացման հարցում, պատշաճ չի անդրադարձել այդ խնդրին:

3. Տնտեսության զարգացման կարևորագույն խթաններ են հանդիսանում մի կողմից ներդրումների աճը, մյուս կողմից արտահանման ծավալների ավելացումը: Այս առումով շինարարությունը չի հանդիսանում արտահանվող ոլորտ: Հեղինակը նշվածի մասին ըստ էության անդրադարձ չի կատարում, որի առկայությունը հնարավորության կտար առավել քան հստակեցնել տնտեսության զարգացման առաջնահերթությունները:
4. Ցանկալի կլիներ, որ հետազոտությունում խորքայի բացահայտվեին ՀՀ-ում անշարժ գույքի իրական “շուկայական գների” ձևավորման հիմքերը, գնորդքանկ-պետություն հարաբերություններում ֆինանսական միջոցների շրջանառության և կուտակման իրական պատկերը և դրա հետևանքները, ինչպես նաև ցանկալի կլիներ, որ աշխատանքը հարուստ լիներ ֆինանսական բնույթի հաշվարկներով՝ դիտարկելով երևոյթի կախվածությունը բնակչության եկամուտներից, բանկային տոկոսադրույթից, գույքահարկից և այլ գործոններից:

## Եզրակացություն

Արված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: Դրանք հետապնդում են բնակարանային ֆոնդի ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործմանը նվիրված հետագա և սույն աշխատանքի զարգացման ուղղությունների բացահայտման նպատակ:

Տ.Վ.Բեզլարյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն: Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Այսպիսով, Տ.Վ.Բեզլարյանի «Բնակարանային ֆոնդի ընդլայնման և արդիականացման ֆինանսական մեխանիզմների զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

## Պաշտոնական ընդդիմախոս

un.q.n, ωρηνֆ.

Z. iher

Հ. Գ. Մնացականյան

Հ.Գ. Մնացականյանի ստորագրությունը

հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, պ.գ.թ.

Լ. Ս. Հովսեփյան

06.07.2020p.

